ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 17 ՄԱՅԻՍ 1875 — ԹԻՒ 1014

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպիոյ գլխաւոր օրագրաց գրածներուն նայելով՝ Ռուսիոյ և Գերմանիոյ օգոստափառ կայսերաց վերջին տեսակցութիւնն կատարելապէս վերահաստատեց ընդհանուր խաղաղութիւնը ։ Փարիզի ՏԵՄԶ օրագիրն կըսէ թէ՝ Մայիսի 1—13ին 'ի դեսպանատունն Ռուսիոյ հասեալ հեռագիր մի կըհաւաստէ թէ Աղէքսանդր կայսրն մեկնեցաւ 'ի Պէրլինէ՝ կատարելապէս համոզեալ Գերմանիոյ կառավարութեան հաշտասէր արամադրութեանց վերայ, որ՛ք կապահովցընեն զպայմանութիւնն խաղաղութեան ։ Մոնիթէօր Իւնիվէրսէլ օրագիրն ևս կըծանուցանէ թէ բոլոր կառավարութեանց ապահովիչ տեղեկութիւններ տուեցան թէ քաղաքային խառնակութեանց ամեն վտանգներն փարատեցան և խաղաղութիւնն վերահաստատեալ է ։

Գաղղիոյ լուրերն յաջողեն ըստ մեծի մասին ․ քաղաքային կուսակցութիւնքն հանդարտութեան մէջ կըգտնուին և կառավարութիւնն իւրին առաջնորդ ունի միշտ զխոհեմութիւնն ։ Ցաջորդ 1876 ամին պիւտճէն արդէն հրատարակեցաւ ․ ծախուց գումարն 2569 միլիոնի կըհասնի և եկամտից գումարն 2573 միլիոնի ․ ըսել է որ չոր՛ միլիոն ֆրանք պիտի աւելնայ ։

Հէլլանդայի փոքրիկ թագաւորութեան նախարարաց խորհուրդն լուծուեցաւ և պաշտօնէից նոր խորհուրդ մի կազմուեցաւ քիր Դրիքուբիի նախագահութեամբ ․ բայց մնաց անհանդարտութիւնն տակաւին կըշարունակէ 'ի մասին ներքին գործոց ախուր և վտանգաւոր կացութեանն ․ որ ազգային երկպառակութեան արդիւնքն է ։ Օլկա թագուհին, որ Ռուսիոյ բարձրապատիւ կոստանդինոս Մեծ—Դքսին դուստրն է, կըկրատէ, կըսեն, իւր լծակից թագաւորին որ հրաժարի ․ քանզի իրաց դրդուեալ վիճակն յոյն ատիճան հասած է, որ Օլկա թագուհին չյուսար թէ իրաւախոհութիւն մի կարելի լինի 'ի մէջ թագաւորական իշխանութեան և քաղաքային հակառակորդաց՝ ։ Կըհաւաստեն թէ Ռուսիոյ արքունիքն՝ յուղեալ 'ի կացութենէ այսմանէ, կենդադոգէտ պաշտօնակալ մի յուղարկեր է թագաւորական գերդաստանին քովմասնաւոր պաշտօնիւ ։

Շատ ժամանակ չէ, որ ձախորդ տարաձայնութիւն մի տեղի ունեցաւ Անգղիոյ և Պիրմանոսանի կառավարութեանց մէջ ․ տարաձայնութիւն, յորմէ կրնար պատերազմ մի ծագիլ յիշեալ երկու տէրութեանց մէջ ։ Լոնտոնի Թայմզ օրագիրն՝ Ռանկունէն Մայիսի 6էն (ըստ նոր տումարի) յուղարկեալ հետեւեալ հեռագիրը կըհըրատարակէ ․ «Պիրմանիայի թագաւորն խաղաղասիրական յայտարարութիւն մի հանեց, որով կըհաստատէ թէ ինքն կըփափաքի հաստատուն պահել զխաղաղութիւնն"։

Աթչինէն (Սումաթրա) Մայիսի 9էն (ըստ Նոր տումարի) գրուած պաշտօնական հեռագիր մի կըծանուցանէ թէ Հոլանտական զօրադնդերն՝ առանց դժալի վնասուց, յաջողեցան տիրելու երկու գլխաւոր ամրոցաց, և հետզհետէ յառաջ երթալու վերայ են ։ Այս պատերազմին վախճանն, ինչպես ուրիշ անգամ ևս գրուած եմք, Հոլանտացւոց համար յաջող լինելուն վերայ տարակոյս չկայ ․ բայց կրնայ տակաւին ժամանակ մը անել և քիչ մը նեղութիւն պատճառել Հոլանտական կառավարութեան 'ի մասին պատերազմական ծախուց ։

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 10ին՛ շաբաթ առաւօտուն՝ Կ. Պոլսոյ Նախորդ Պատրիարք՝ ամենապատիւ տէր Մկրտիչ Խրիմեան Ս. Արքեպիսկոպոսն՝ ընկերութեամբ իւր ձեռնասուն հոգևոր որդւոյն Սրունձեանց արժանապատիւ տէր Գարեգին ուսումնական վարդապետին, հասաւ'ի քաղաքս և իւր բարձր աստիճանին արժանաւոր յարգանօք ընդունուեցաւ 'ի բոլոր Հայ բարեպաշտ ժողովրդենէ և յազգային երևելեաց ։

Նորին Սրբազնութիւնն՝ որ դժբաղդաբար յօդացաւի (րիւմաթիզմ) ախտիւ վարակեալ է, օդափոխութեան և իւր ցաւոց դարման գտնելու համար՝ իբրև այցելու հիւր եկած է ։ Այս բարեպատեհ առիթն՝ անտարակոյս բարեբաղդութիւն մըն է վասն Զմիւռնացի Հայոցս՝ մանաւանդ 'ի ժամանակիս յայսմիկ, յորում քրիստոնէավայել եղբայրսիրութիւնն և ազգասիրական միաբանութիւնն չեն փայլիր 'ի մէջ մեր ։ Բայց քաջայոյս եմք որ սրբազան Հայրիկին խաղաղասիրական քարոզքն և հայրական յորդորանքն արդիւնաւոր պիտի լինին 'ի վերահաստատութիւն միաբանական սիրոյն և ուսումնասիրական եռանդեան ․ որով Զմիւռնացի ժողովուրդն՝ ժամանակ մը, իրաւամբ կըպարծենար ։

Նորին Սրբազնութիւնն փութացաւ յայց ելանել Մեսրոպեան և Հռիփսիմեան ազգային վարժարանաց քաղաքիս ։

Մեծարգոյ տօքթօր Զայեան հայկազուն ճարտար բժիշկն, որ Փարիզի բժշկական դպրոցին վաղեմի աշակերտ է, և վիրաբուժութեան ու մանկաբարձութեան մէջ յառաջադէմ, յանցեալում շաբաթու Անդրիանուպօլսէն գալով, հասաւ 'ի քաղաքս ․ ուր ժամանակ մը մնալու և իւր արհեստն 'ի գործ դնելու դիտաւորութիւն ունի ։ Տօքթօր Զայեանն կըփափաքի կարելի եղածին չափ օգտակար լինել մեր ազգայնոց քաղաքիս, իւր բժշկական խնամքն ձրիաբար մատուցանելով տնանկ և աղքատ հիւանդաց ։

—Վսեմաշուք տօքթօր Սէրվիչէն էֆէնտին՝ որ անցեալ շաբթուանէ 'ի վեր մեր քաղաքը կըգտնուէր, հինգշաբթի երեկոյին գաղղիական շոգենաւով վերադարձաւ 'ի Կ. Պոլիս ։

—Երամեան վսեմ. Գէորգ պէյին դուստրն, որ Պ. Տատեան Յօհաննէս պէյին լծակիցն է, անցեալ շաբթու Իզմիրէն անցնելով գնաց 'ի Փարիզ 'ի տեսութիւն ծնողաց իւրոց, որ յամաց հետէ 'ի յիշեալ մայրաքաղաքն կըբնակին ։

Տատեան մեծաշուք Յօհաննէս պէյն՝ իւր ազնուափայլ տիկնոջ ընկերակից եղած էր մինչև 'ի Զմիւռնա ․ ուր երկու օր մնալով վերադարձաւ 'ի Կ. Պոլիս ։

—Յանցեալում շաբաթու, Ռուսիացի բարեծնունդ Պ. Շապուրով ազնուականն ևս հասաւ 'ի քաղաքս, ուր կըգտնուէր իւր մեծա. լծակիցն գրեթէ յերից շաբաթուց հետէ 'ի տուն ծնողաց իւրոց ։ Յիշեալ ազնուական սիրաշաղկապ լծակիցքն ամսոյս 10ին աւստրիական շոգենաւով վերադարձան 'ի Կ. Պոլիս ։

Կ. Պոլսոյ ազգային երեսփոխանական ժողովն՝ ամսոյս 3ին բացուեցաւ ըստ սովորութեան, և այս բարեպատեհ առթիւ ամենա. տէր Ներսէս Ս. Պատրիարք Հայրն ընդարձակ ճառ մի ընթերցաւ, յորում ազգային ներկայ կացութիւնն համառօտիւ կընկարագրէ, ընդհանուր ազգին բարոյական և մտաւորական ոչ բաւոք վիճակը յառաջ կըբերէ, նորա դարմանին ծանր դժուարութիւնն դիտնելով՝ երեսփոխանական ժողովին և ազգային միւս խորհրդոց ուշադրութիւնը յիշեալ կարևոր դարմանին վերայ կըհրաւիրէ, Սահմանադրութեան վերանորոգութիւնն և զայն պարզ ու համառօտ կանոնադրութեան մի վերածելը հարկաւոր կըհամարի և վերջապէս իւր անձնական տկարութիւնը, և Պատրիարքական պարտուց ծանրութիւնը յառաջ բերելով իւր հրաժեշտը կըմատուցանէ հրաւիրելով զկեդրոնական ազգային ընդհանուր ժողովն, որ նոր Պատրիարք մի ընտրելու հոգ տանի, և այլն և այլն ։

Ահաւասիկ Նորին բարձր Սրբազնութեան կարդացած պատուական ատենախօսութեան պատճէնն․ որուն վերայ ընդհանուր ազգին ծանր ուշադրութիւնն կըհրաւիրեմք ։

Տեարք երեսփոխանք Հայոց,

Ցամենազօրն Աստուած և ի ձեր ազգասիրութիւնն ապաստան՝ լի յուսով կըբանամ այսօր Ազգային ժողովը, մաղթելով որ ձեր փորձառութեամբն ու ջանիւք, օրինապահութեամբ և միաբան ազգասիրութեամբ արդիւնաւորագոյն լինի ներկայ շրջանն ։

Ազգային գործերն վարչութեան համարատուութեամբ ձեզ պիտի յայտնուին ․ ձեր իմաստութեամբն պիտի կշռէք և գնահատէք զանոնք ։

Այժմէն կարող եմ ըսել թէ յարաբերութեց և ժողովոց կանոնաւորութեան և գործոց կարգադրութեան համար ո՛չ ձեր կողմանէ և ո՛չ մեր ու ժողովոց և խորհրդոց կողմանէ աշխատութիւն և ջանք չպակսեցան ։ Գաւառացի ազգայնոց կալուածական խնդիրներն որ մեր նախորդներէն ժառանգած էինք, Բ. Դրան մատուցելով յուսադրիչ խոստումներ տրուեցան ։ Բազումք ի կուսակալաց մեր մտերմական գրութիւններն ուշադրութեան առնլով՝ բաւական գործեր կատարել բարեհաճեցան ։

Ազգային ելևմուտքն շնորհիւ երկու բարերարաց, որ հին պարտքը վճարեցին, և զորս ձեր շնորհակալութեան քուէիւքն մեծարեցիք, շնորհիւ ձեր քուէարկած հանգանակութեան օրինաց, նա մանաւանդ շնորհիւ ամեն ազգայնոց՝ երբ ըստ օրինաց փութան իրենց պարտքը կատարել, յուսամ որ գոհացուցիչ վիճակ մը կառնու ։ Ձեզ ներկայանալի տարեկան պիւտճէով պիտի տեսնէք զայս և ըստ այնմ դատէք ։

Տեարք երեսփոխանք,

Խորին և երախտագիտական շնորհակալութիւն կըմատուցանեմ ձեզ և ինձ գործակից ժողովոց և խորհրդոց՝ այն վստահութեան համար որով պատուեցիք զիս դուք և նոքա ; զի գիտեմ՝ որ ես անարժան էի ատոր, քանզի իմ պակասութիւններս և սխալներս ամենէն աւելի ինձ յայտնի են ։ Ազգը գոհ ընելու համար աշխատելու կամք չպակսիր ինձմէ, բայց գլխաւոր բան մը կըպակսի, առանց որոյ անկարելի է յարատեւութեամբ գործել ընդ ծանր պատասխանատուութեամբ, այն է կատարեալ առողջութիւն ։

Անցեալ տարի այս օրերն էր զիս Պատրիարք ընտրեցիք ․ աղաչեցի զձեզ որ արժանաւորագոյն մը բարձրացնէք այս աթոռին վրայ ․ չուզեցիք լսել և ես հնազանդութեան փորձը ցուցի ։ Այսօր իրաւունք ունիմ թախանձագին պաղատիլ ձեզ․ բաւական համբերեցէք և հաճեցէք փութով ուրիշ մը ընտրելու փոխանակ իմ․ ես պատրաստ եմ իբր մին ի վարդապետաց ազգիս իմովսանն ծառայել ինչպէս յառաջ ։

Պատրիարքը Ազգին ամենէն զօրաւոր գործին պէտք է ըլլայ ․ ես մաշած գործիք մ'եմ, առողջ միտք յառողջ մարմնի, կըսէ հին առածը ։

Ցշմարիտը ըսելով գլուխս թմրած է և միտք կորով չէ մնացած յիս ․ քանզի ամեն ատեններէ աւելի փափուկ է այս ժամանակս ․ ուստի և մեծ ու հզօր հանճարով գլուխ և յոյժ լայն և գիտակցուն սրտի գործ է ներկայ Պատրիարքութիւնը ․ զայս կանխաւ գիտէի և կզգամ այսօր, բայց ոյժ չունիմ տոկալու ։ Արիութիւն, համբերութիւն, եռանդեան զօրութիւն, շրջահայեցութիւն, յարաժամարթնութիւն, ի ժամու և

տարաժամու վազվազումն, կրակի վրայ չիջուցանող ջուր, անկենդանութեան վրայ բորբոքիչ հուր, լոյս, հոգի, սէր, խաղաղութիւն, ձեր, տղայ, դեղ, դարման, մխիթարութիւն, օրինակ բարեաց, միով բանիւ ամենայն ինչ է Պատրիարքը։

Ուրեմն կը խնդրեմ և. կը պաղատիմ. ընտրեցէք արժանաւորագոյն մը, որ գոնէ վոքր ի շատէ այս հանգամանքներն ունենայ։

Չի մեք պարտիմք անդուլ անդադար բայց լուրջ և հանդարտ կերպով աշխատիլ յառաջ դիմելու։ Գիտնալու ենք որ անհուն պիտոյք ունինք լեցնելու. մեր բարոյական, մտաւորական և նիւթական վիճակաց բարւոքումն անբաւ զոհողութեանց պէտք ունի։ Մենք եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ ունիմք. սակայն մեր այս ազգային հաստատութիւնք մեծամեծ բարեկարգութեան և անոնց ապահովութիւնքն մեծ ջանից կարօտ են։

Ուսումը տարածելու մեծամեծ ջանքեր ընելու ենք. զի սակաւին տգիտութիւնը իւր անբաժանելի ընկեր թշուառութեամբ մեծամեծ նախճիրներ կը գործէ շատ տեղեր և գրեթէ ամեն տեղ։ Ազգային դաստիարակութիւնը իւր խանձարրոյ մէջն է տակաւին, թէև ուսումնարաններ ունինք։ Եկեղեցականաց բարեկարգութիւնն և նուիրապետական դասակարգութիւնը՝ որ հոգին է եկեղեցականութեան, տակաւին մեծ ճգանց կը կարօտին, թէև ուսեալ, բարեկիրթ, լեզուագէտ և սրբակրօն եկեղեցականներ ունիմք։

Ունիմք ազգային Սահմանադրութիւն, օրինաւորապէս ըստ Սահմանադրութեան ընտրեալ ժողովներ, գաւառական ժողովներ, կրօնական և քաղաքական ժողովներ; Ուսումնական, Տընտեսական, Նկեմոց խորհուրդներ և այլն, թէ այստեղ և թէ գաւառները. բայց դեռ բեղմնաւոր արդիւնքներ տեսանելէ հեռու եմք։

Ունիմք, փառք Աստուծոյ, ողորմած դրամատէրներ, հարուստ և վեհանձն վաճառականներ, հանճարաւոր և ազգին պատիւ բերող անհատներ. սակայն անհամար ընտանիք, և երիտասարդ անձինք, թէ աստ և թէ ի դաւառս, անգործութեամբ և նորա հետևանք դառն աղքատութեամբ կը տուայտին, և դեռ չեմք կարողացած ընկերութիւններ, գործարաններ, արհեստանոցներ կազմել, կանգնել, որպէսզի գործ և կեանք մատակարարենք այդ տառապելոց։ Թէև պէտք չէ մոռնալ որ այս տարուան սովէն նեղեալներուն ոչ սակաւ նպաստամատոյց եղան վեհանձն ազգայինք։ Ժամանակիս բերմունքն և ապագային պահանջմունքն խիստ շատ են։ Պէտք չէ յաւակնիմք թէ մեր պարտքերն կատարած եմք, զի ամենուս ըրածն մէկտեղելով անհուն պիտոյից հետ բաղդատմամբ աննշան և աննշմարելի բան մը կը դանեմք։ Սակայն և ոչ ներելի է պղերգութեամբ և յուսահատութեամբ ձեռնթափ լինիլ. անդադար աշխատելու եմք, բայց խոհեմութեամբ, և գիտնալու եմք որ ամեն բան իսկոյն միատեղ չենք կրնար կատարել. բարձր դիրքէ մը ազգային ընդարձակաժաւալ անմշակ դաշտը տեսնել մէկ ակնթարթի մէջ կարելի է. սակայն հոն արշաւել, քննել, մշակել, անոր ժեռուտ, քարուտ, մացառուտ, ճահճախուտ տեղերն արգաւանդահող ընելն հարկաւ կատարելագոյն գործիքներու, ապահով միջոցներու, բազում քրտանց և երկարատև ժամանակաց կը կարօտի. քանզի գիտէք թէ արձակ ընդարձակ չէ մեր ընթացած ճանապարհը. թէ ինչ արգելքներ, քանի՞ քանի՞ զօրաւոր շահերու ընդհարումներ և այդ սաստիկ ընդհարումներէն ինչ փչրուելու վտանգներ կան հոն. ուստի մեր գործը կանոնաւոր յարատևութեամբ և ոչ յախուռն ամբոխապարանոք յառաջ վարելու ենք։

Գիտէք որ անհամար վէրքեր ունիմք բուժելու և ասոնց դէմ անհամար տեսական սպեղանիք. սակայն գիտէք նաև որ ասոնցմէ ազդուագոյնը որոշելն է գործը. զի այս երկիրը՝ մանաւանդ տեսականին և գործնականին մէջ՝ անհուն տարբերութիւն կայ. հատու գործիքին՝ սղդուագոյն դեղին ընտրութիւնը՝ գործոյ և փորձոյ արդիւնքն պիտի լինի. իմ գլխաւոր մէկ երկիւղս սա է որ չըլլայ թէ ի խնդիր լաւագունին լաւը կորսնցնեմք։ Մեր ծրագիրը կամ յառակագիծն պէտք է լինի աննուաճելի վարաք դէպի յառաջադիմութիւն իրական. վազվազկոտ և խիզախ յանդգնութենէ և մեռելատիպ թմրութենէ միանգամայն հեռանալ, առանց ժխորի ժամառժամ դէպի լաւագոյնը նկրտիլ։ Մեր ազգին քաղաքականութիւնը այսպէս կը հասկնամ. զգուշաւոր, շրջահայեաց, խոհեմ արիութիւն. ձեռքերնիս ունեցածնիս վրայ չտալով վատակի եան է ելլալ. միշտ դործել առաւել քան թէ խօսիլ, և ներկային անսպատակ գրգռութիւններէն խուսելով ապագային չմեռցնել, հրաղայր իղձերն անտեսել, հասարակայ ուղղամտոհ կարծիք, թուիք տարածել, զի այն բաներն զորս մենք չեմք կարող այսօր յարդիւնս ածել, հասարակաց բանավարութիւնը լուսաւորուելով կարողէ օր մը հրաշակերտել. մեր սերտ միութեամբն մեր մէջ ազգային ոգին անթափանցելի և անխոցելի պահել. քաղբահամ այլ փափուկ պտուղի մը պէս, որ խիստ և կարծր կեղևով շուրջ պատեալ անվթար կը մնայ արտաքին փոփոխական օդոյ ազդեցութենէն։

Այժմ հասկցած էք դուք, Տեարք Երեսփոխանք, որ մեր այս պահպանակը, ուղեցոյցը և այլն, շնորհիւ Օսմանեան պետութեան մեր ազգային Սահմանադրութիւնն է՝ պատշաճ վերաքննութեամբ հանդերձ։

Օ՜ն ուրեմն ժամ է արդ, նոր Պատրիարքի ընտրութեան հետ ձեր օրակարգին մէջէն ծերագոյն և ձեր նոր շրջանին մէջէն կարևոր և առաջին դասուած խնդիրն լուծեցէք. աններելի է այլ ևս յապաղեցնել սորա լուծումը. այս հնգետասնամեայ փորձը և ձեր դիւանին վրայ դանուած շատ մը դիտողութիւններ և ծրագիրներ զձեզ լուսաւորելով շուտով վախճան պիտի տայք անշուշտ այս գործոյն։ Հարկ չէ ըսել թէ կանոնը որչափ պարզութիւն ստանայ, այնչափ աւելի դիւրընթաց կըլլայ։

Պէտք է որ համոզուելով վճռէք թէ գաւառներու և նոյն իսկ Պօլսոյ մէջ գործադիր ժողովներն, տեսուչ խորհուրդներն սակաւաթիւ անձինքներէ բաղկացած ըլլան. և գործադիր իշխանութեան միտինակ ուխտեալ նախագահին արտօնութիւն տայք անգործադրելի կէտերն իսկոյն վերաքննութեան ենթարկելու։

Տեարք Երեսփոխանք,

Հայոց ժողովուրդը յոյսը ձեր վրայ դրած է. ամեն բան իր պատրիարքէն, ձեզմէ և Սահմանադրութենէն կ'սպասէ. ծանր է ձեր և մանաւանդ Պատրիարքին պատասխանատուութիւնը. և ծանրագոյն պիտի ըլլայ, եթէ իրայ վիճակն ընդ փոյթ 'ի նկատի չառնուք, եթէ գրեթէ միահաղոյն նոր ուխտ մը չընէք նոր ոգւով գործելու. զի եթէ Սահմանադրութիւնն ալ փոխենք ու մենք ղմեզ չ'փոխենք, այսինքն նոր ոգի, նոր գործունէութիւն, հաստատուն կամք չառնումք, հագուստը միայն փոխելով ինքզինք քաղաքակիրթ համարող մարդոց նմանած կըլլամք։

Ձեր երկրորդ և յոյժ կարևորագոյն մահու և կենաց խնդիրն ազգային դաստիարակութիւնն է. Սահմանադրութեան բարիքը պէտք է փայլեցնել, թաղական վարժարաններն և անոնց մատակարարութիւններն բարւոքելով՝ պիտանի ընդարձակելով՝ կեղրոնական վարժարան հաստատելով, ուսմանց ծրագիրներն կատարելագործելով, և գաղափարները միացնելու համար դաստիարակութիւնը միակերպելով, նոր երկսեռ նախակրթարաններ, նոր երկրորդական վարժարաններ բազմացուցանելով, զի ապ. դբոյներն պիտի բուսցուցեն մեզ բարեկրթի ծնողաստեր մայրեր, եկեղեցոյ արժանաւորագոյն պաշտօնեայներ, ազգային ժողովոյ արթուն և ազգասէր անդամակիցներ, և լուսամիտ, գործունեայ և պատուական և իւր գործը չինելու կարող ժողովուրդ։ Երբ այսպէս բարեկարգ դպրոցներ, բարեկարգ վանքեր, վարժապետանոցներ, արհեստանոցներ և այլն ունենանք, երբ Ազգին և տէրութեան պիտանի քաղաքացիներ սկսին ելնել մեր դպրոցներէն, այն ատեն Սահմանադրութիւնը մեռեալ տառ մը չ'մնալով իւր արդիւնքը ցուցուած և տէրութեան ու ազգին մէկ խիստ պատուական օրինադիրքն եղած կըլլայ։ Եւ ձեր անունն ալ ապագայ սերունդէն կօրհնուի՝ ոսկեղէն տառերով դրոշմուելով մեր պատմութեան մէջ։

Երեսփոխանք տեարք,

Պէտք է դիշէք նաև որ այսօր հնգետասնամեայ Սահմանադրութեան տարեդարձի ամենայն երկրորդ օրը այս ժողովոյս բացման ատեն՝ այս հանդիսաւոր վայրկենիս՝ մեր ամենուս պարտքն է բարեբաստիկ երկայն աւուրս մաղթել մեր օգոստափառ Կայսեր, որոյ հովանաւորութեամբը մեր կրօնը կը պաշտեմք, մեր լեզուն կը մշակենք, մեր տղայքը ազգային ոգւով կը կրթենք ու եկեղեցւոյ և ազգին գործերն կը վարենք ըստ Սահմանադրութեան. օսմանեան վեհապետայ հովանին բարիք մ'եղած է մեր ազգին. կեցցէ ուրեմն մեր օգոստափառ ինքնակալն Սուլթան Ապտիւլ Ազիզ խան։

Վերջացնելով խօսքս, զՁեզ տեարք Երեսփոխանք, Աստուածային պաշտպանութեան յանձնելով, կը մաղթեմ որ իմ նոյնպէս բանն Աստուծոյ հաճեցի վարել Ձեր բանավարութիւնը յուղիչն և յօգտակարն, և Հոգին Սուրբ հոգի սիրոյ, հանճարոյ և խորհրդոյ և միութեան սաւառնելով ձեր մտաց վրայ, տաժ և լուսաւորէ ձեր խորհուրդներն այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

Իզմիր, 12 Մայիս 1875։

Յարգոյ խմբագիր Արշալոյս լրագրոյն։

Յետագայ յօդուածս ձեր պատուական լրագրոյն մէջ հիւրընկալելու հաճութիւնդ խնդրելով՝ կաղաչեմ որ իմ շնորհակալեայս հաստատիքը կանխաւ ընդունելու բարեհաճիք։

Արևելեան Մամուլ «Հայք կ'աւելնան, թէ կը պակսին» վերնագրով յօդուած մը գրած էր, որմէ Իզմիրի վիճակագրութեան վերաբերեալ հաշիւներուն համար միայն յայտնի սխալ-ենք եղած էի։ Արևելեան Մամուլ կը պատասխանէ. բայց ներուի ինձ ըսել որ խնդիրը ընդլայնելու հարկ չ'կար։ Թէպէտև իրաւունք ունի ըսելու որ մեր ազգին վիճակագրական տեղեկութիւնները թերի են և անստոյգ, թէ ընդհանուր Հայոց թիւն որչափ է չ'գիտանենք, բայց ասոնք զատ խնդիրներ են։ Նոյնպէս կը սէ թէ «այս մասին հաւանականութեան, տնտեսական քանի մը սկզբանց համեմատ, և Հայոց նիւթական կացութենէ դատելով կարողենք միայն եզրակացութիւն մը հանել անոնց նուազելը հաստատելու համար»։ լաւ, բայց իր սոյն եզրակացութիւնը հաստատելու համար Զմիւռնիոյ Հայերը վերջին տասն տարուան մէջ գրեթէ կիսովին պակսեր են ըսելով օրինակ կը բերէ, և որովհետև ասիկա յայտնի սխալ մ'է. ուստի եթէ իր հանած եզրակացութենէն ուրիշ եզրակացութիւն մը հանել ներելի է, կը սեմ թէ մեծամամուրեանն Իզմիրի բնակիչ, միանգամայն և խմբագիր լինելով՝ քանի որ իր բնակած քաղաքին ազգային վիճակագրութեան վրայ որոշկամ ճշմարտանման գաղափար չ'ունի, ինչպէս կրնայ ընդհանուր Հայոց նկատմամբ ըսել «կարող ենք միայն եզրակացութիւն մը հանել անոնց նուազելը հաստատելու համար»։ այս կերպով միթէ իր միւս դիտողութեանց ճշտութեանը վրայ ալ կասկածելու տեղի տուած չ'ըլլար։ Արևելեան Մամուլն կ'ըսէ որ «Աշշ-ոյ նամակագիր Հայն՝ որչափ որ ազգասիրութենէ շարժեալ կը փութայ մեր սխալած լինելը նշանակել, չ'հաճիր մեղի ուղղել ցոյց տալ և ըստ այնմ մեր գրածն շտկենք»։ Այո՛ բայց ինք իր սխալը շտկելու համար ինձմէ աւելի ձեռնհաս և կարող ըլլալուն համար՝ զանց ըրած էի. իմ գիտցածս այս է որ եթէ 10 տարի առաջ 2200 տրու. Հայ կար, ինչպէս որ Արևելեան Մամուլ կ'ըսէ. այսօր 'ի բաց առեալ պանդուխտները. այս թիւէն աւելի են քանի՞ պակաս։ Գալով «իսկ մեր յօդուածին հիմնական սկզբունքին վրայ բոլորովին լռութիւն կ'պահէ» խօսքին, ասիկա յիշելը անդամ աւելորդ էր. վասնզի վերը յայտնեցի և ինքն ալ իր պատասխանին մէջ կը խոստովանի թէ իմ խօսքս միայն Իզմիրի Հայոց վիճակագրութեան կը վերաբերէր՝ միևնոյն ժամանակ ես ալ կը խոստովանիմ որ տնտեսական սկզբանց և ընդհանուր Հայոց նիւթական կացութեան վրայ տեղեկութիւն չ'ունենալուս համար յանդգնութիւն էր անշուշտ եթէ կարողութենէս վեր խնդիրներու ձեռնամուխ ըլլայի։

Արևելեան Մամուլն կը սէ որ «և մեք պաշտօնական աղբիւրէ առնելով վեր 'ի վերոյ գրած էինք որ այժմ քաղաքիս մէջ 1200 Հայք կրգըտնուին արու. միայն մուցեր էինք նշանակել որ այս թիւը չ'պարունակեր նախ՝ օտար տէրութեանց Հայ հպատակներն, երկրորդ՝ դրսեցի Հայերը»։ և աւելի վարբ թէ «միայն եթէ օտար հպատակ Հայերն և պանդուխտներն յաւելունք թերևս այս գումարը 1600ի հասնի։ Արևելեան Մամուլն նորէն կը սխալի, վասնզի Իզմիրի ազգայինները արու և էգ գոնէ 5000 հոգի կրնանք հաշուել 'ի բացառեալ պանդուխտները. և ասիկա դիւրութեամբ կրնայ ստուգուիլ քահանայից դասուն ծխական տումարներէն, և յուսամ որ իմ նշանակած սոյն հաւանականագոյն թիւն՝ աւելի չիտակ երևի ընթերցողայ, քանի՞ մեծամամուրեանի պաշտօնական աղբիւրէ ա-

ուած տեղեկութիւնը, որ կարելի է մասնաւոր նպաստակով տրուած բլլայ իրեն։ Աւելորդ չեմ տեսներ յիշելը որ ասկէ առաջ Արշալոյս ևս բնիկ և պանդուխտ ազգայինները մէկտեղ առնելով կարծեմ 6000 հոգի հաշուած էր քաղաքիս Հայ բնակչաց թիւը։

Համամիտ եմ Արևելեան Մամլոյ, որ մեր յետադիմութեան ներքին պատճառները հետազօտելով միայն կարողենք անոնց դարման բերել, և չէթէ մեր ցաւերը ծածկելով և ազգային ինքնասիրութիւնը դգուելով։ Շիտակ է ըսածը և բոլորովին կընդունիմ. բայց անուշադիր և վեր 'ի վերոյ դիտողութիւններով ազգին ընդհանրութեան յուսահատութիւն պատճառելն ալ ազգին վիճակին դարման տանիլ չէ կարծեմ. վասնզի այլ է ազգային զեղծումները և յետադիմութեան պատճառները փնտռել, գտնել և նշանակելը, (որ խմբագրի մը նուիրական պարտքն է,) և՝ հետևցնել որ եթէ այնպէս չարունակենք, անոնց չարաշուք, ազգ եղծութիւնները վաղ կամ անագան ազգ երնիս պիտի կբրէ, և այլ է գրել որ՝ վերջին տասն տարուան մէջ 2200 արու ազգայնոցմէ՝, այժմ հաղիւ թէ 1200 հոգի մնացած է, և կամ վերջէն նոյն թիւը պանդուխտներով մէկտեղ 1600ի վերածելը. վասնզի բացուած վերքը դարձեալ խիստ մեծ և յուսահատական կ'ըլլայ։ Մեծա. Մամուրեանն չարունակելով կըսէ որ «Արևելեան Մամուլն՝ որ ոչոր չէ ամեն ինչ վարդագոյն տեսնել, այս դրութեան կրհետևի օգտակար լինելու յուսով՝՝. սակայն և ինձ ներուի ըսել որ ամեն ինչ սև և գիշեր տեսնելու և նկարագրելու դրութեան հետևիլն ալ միատակար և վնասեցուցիչ իրողութիւն մ'է։ Ամեն ինչ իր բնական գունով և պարզութեամբը նկարագրելու դրութիւնը ամենէ օրինաւոր և արդարն է։

Մնամ ազգիս յառաջադիմութեան ճշմարիտ նախանձախնդիր։ ՆՈՃՆ ՀԱՅԸ

Թիֆլիզի ՄՇԱԿ լրագրոյն գրեն 'ի կալկաթայէ հետևեալ նամակն, որ զանազան տեղեկութիւնս պարունակէ 'ի վերոյ Հայոց բնակելոց 'ի Հնդկաստան. տեղեկութիւնք՝ որք թէև ուշադրութեան արժանի են, բայց գուցէ և սրբագրութեան կարօտ՝ ըստ մասանց ոմանց։

ՆԱՄԱԿ ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Հնդկաստանի Հայ ազգաբնակութեան դրութիւնն այժմ ոչ այնքան նախանձելի է։ Մի ժամանակ, անգլիացւոց տիրապետութիւնից առաջ հայերը, օգուտ քաղելով տեղային Հնդիկների միամտութիւնից և երկրի բնական ճոխութիւնից ձեռք էին ձգել այդ աշխարհի համարեա բոլոր հարստութիւնքը։ Նրանց վաճառականութիւնը խիստ լայն ասպարէզ էր բացել Հնդկաստանից մինչև Չինաստան, Ճապոնիայ և Եւրոպայ։ Իսկ երբ յայտնուեցան անգլիացիքը, Հայերը սկսան հետզհետէ տեղի տալ նրանց, մինչև վերջապէս խոյս տուին իրանց ասպարէզից։

Ես այդ չեմ վերաբերում այն հանգամանքին, որպէս ոմանք կարծում են, թէ հայերը քաղաքակրթութեան ուելի ստոր աստիճանի վերայ կանգնած լինելով քան թէ անգլիացիքը, չկարողացան նրանց հետ ազատ մրցութիւն անել։ Այդ թէև մասամբ իրաւացի է, բայց գլխաւոր պատճառը հայերի անկման պէտք է որոնել նրանց բնաւորութեան մէջ։ Հայը չէ սիրում իւր արևան ազգերի հետ կեանքի մէջ ներդաշնակաբար ընթանալ։ Նա կամ պէտք է հարստանարէ, կողոպտէ և մինչև վերջին շապիկը խլէ նրանից։ Իսկ եթէ հակառակորդի մէջ ուժ չունի և չյաջողուեց այդ, պէտք է ենթարկուի նրան և ըստ իւր բոլոր արժանաւորութիւններ։ Որպէս առաջնի մէջ մինչև ծայրայեղութեան հասած անզգութ է նա, նոյնպէս վերջինի մէջ չափազանց ստոր և փոքրոգի է։

[illegible] ամենայն երկու ծայրայեղ կէտերի [illegible] ժամանակ նա հարստահարելուց, այժմ նա ստրկացած է անգլիացոց։ Իսկ այդ ստրկութիւնը խլում է նրանից [illegible] հարմար։ Նա սկսել է խօսել [illegible] իւր զաւակները կրթում է նրանց ուսումնարաններում, իւր դեղեցիկ աղջիկները տալիս է նրանց որդիներին։ Իւր տան և ընտանիքի մէջ մոցրել է նա անգլիական ձևեր և սովորութիւններ։ և այդպէսով, նա օր ըստ օրէ հեռանում է իւր ազգային առանձնութիւններից և հետևապէս հայութիւնից։

Այդ է իսկական պատճառը, որ մի ժամանակ մօտ 20,000 Հայ բնակիչ ունեցող Հնդկաստանը, այժմ ունի ընդամենը 350 ընտանիք(1)։ Յիշեալ թուի մէջ, բացի մի քանի հարուստ տներից, մնացածները համարեա աղքատներ են և ապրում են եկեղեցիներից ստացած ողորմութիւնով։ Այստեղի հայերը, որպէս լսում եմ, մի ժամանակ կարգադրած են եղել իրանց մէջ իւրաքանչիւր գուրս տարած և ներս բերած ապրանքի հակից նուիրել եկեղեցիներին մի որոշեալ արծաթ, և այդպէսով եկեղեցիքը հարստանում են, և նոյն արծաթը այժմ կերակրում է մի ժամանակ հարուստ եղած վաճառականներին։ Այդպէս է Հայ վաճառականի վիճակը. երբ նրա փողը ձեռքից գնաց, նա դառնում է մուրացկան. որովհետև կեանքի մէջ ապրուստ շահելու համար մի այլ գործ ընդունակ չէ։

Իրանց բոլոր ջանքը վաճառականութեան տուած, հայերը այստեղ արհեստների և երկրագործութեան ուելի ուշադրութիւն դարձրած չեն եղել. այդ ճիւղերը անցել են հնդիկների ձեռքը։ Եւ հայը հնդիկի հետ ևս մրցութիւն անել չէ կարողանում արհեստի և երկրագործութեան մէջ, որովհետև նա իւր կատարելագործութիւնով յիշեալ պարապմունքներում չէ գերազանցում հնդկից։ Բացի դորանից հնդիկի կեանքը և ապրուստը այնքան քիչ պէտքերի կարօտ է, որ նա կարողէ մէջտ իւր աշխատութիւնը և արդիւնաբերութիւնը էժան գնահատել։ Բրնձից եփուած պարզ կերակուրը՝ նրա ամենօրեայ մնունդն է, հասարակ սպիտակ կըտաւից մի ոտաձանելիք՝ նրա հագուստն է. եղեգներից հիւսած փոքրիկ տաղավարը՝ նրա պալատն է։ Հնդկին համեստ լինել իւր անտեսութեան մէջ ստիպեցնում են ոչ միայն նրա սովորութիւնները, այլ բնութիւնը, երկրի կլիման և նրա կրօնքը։ Հնդկի մեծ ծախսերն գնում են իւր քուրմերին և մեհեանները, դրանք ևս օրըստ օրէ նուազվելու վերայ են։

Իսկ Հայը չէ կարողոչ հնդկի նման ուտել, ոչ նրա նման հագնել և ոչ նրա տաղաւարի մէջն ապրել։ Հայի կեանքի պայմանները աւելի շատ ծախսերի կարօտ են։ Ուրեմն նա չէ կարող իւր պատրաստած կօշիկը այն գնով վաճառել, ինչ գնով տալիս է հնդիկը։ Որովհետև հնդիկը մի փոքր վաստակով ապրել կարող է. իսկ հայը չէ կարող։

Հային, որպէս ճերմակ կաշի ունեցող մարդուն, մշակութիւնով և ստոր պարապմունքներով զբաղուիլ ընդունուած չէ, որպէս հնդիկների գործ։ Բայի դրանից, երկրի մէջ տիրող ստրկութեան պատճառով աշխատութեան վարձը այնքան չնչին է (10 կոպէկ.) որ հային անկարելի է նրանով ապրել։ Իսկ հնդիկը օրեկան 10 կոպէկ ստանալով, կարողէ բայի ապրելուց մի բան ևս վաստակ թողնել։

Չնայելով ապրուստի այդպիսի դժուարութիւններին, Պարսկաստանի վերջին սովից յետոյ, մի մեծ հոսանք Սպահանցի հայերի թափուեցան այստեղ և ապրում են տեղային հարուստների ողորմութիւններով։

Հայերը Կալկաթայում միայն ունին մի ճեմարան, այն ևս անկարգ դրութեան մէջ։ Օրիորդաց ուսումնարաններ ոչ մի տեղ չէք տեսնի. Հայ աղջիկները (ի հարկէ մեծատունների) տնում են իւր քուրմերին և մեհեաններին, դրանք ևս օրըստ օրէ նուազվելու վերայ են։

Իսկ Հայը չէ կարողոչ հնդկի նման ուտել, ոչ նրա նման հագնել և ոչ նրա տաղաւարի մէջն ապրել։ Հայի կեանքի պայմանները աւելի շատ ծախսերի կարօտ են։ Ուրեմն նա չէ կարող իւր պատրաստած կօշիկը այն գնով վաճառել, ինչ գնով տալիս է հնդիկը։ Որովհետև հնդիկը մի փոքր վաստակով ապրել կարող է. իսկ հայը չէ կարող։

Հային, որպէս ճերմակ կաշի ունեցող մարդուն, մշակութիւնով և ստոր պարապմունքներով զբաղուիլ ընդունուած չէ, որպէս հնդիկների գործ։ Բայի դրանից, երկրի մէջ տիրող ստրկութեան պատճառով աշխատութեան վարձը այնքան չնչին է (10 կոպէկ.) որ հային անկարելի է նրանով ապրել։ Իսկ հնդիկը օրեկան 10 կոպէկ ստանալով, կարողէ բայի ապրելուց մի բան ևս վաստակ թողնել։

Չնայելով ապրուստի այդպիսի դժուարութիւններին, Պարսկաստանի վերջին սովից յետոյ, մի մեծ հոսանք Սպահանցի հայերի թափուեցան այստեղ և ապրում են տեղային հարուստների ողորմութիւններով։

Հայերը Կալկաթայում միայն ունին մի ճեմարան, այն ևս անկարգ դրութեան մէջ։ Օրիորդաց ուսումնարաններ ոչ մի տեղ չէք տեսնի. Հայ աղջիկները (ի հարկէ մեծատունների) տնում են անգլիացոց դպրոցներում։ Եկեղեցի ամեն տեղ ունեն, որտեղ որ բնակութիւն ունեն հայերը։ Քահանայները ուղարկվում են Սպահանի վիճակից 3—4 տարի ժամանակով։

(1) Կալկաթայում 150 տուն. Դաքայում 30. Բանգունի մէջ 30. Սինգապորում 40. Բատավիայի մէջ 50 Յավայի մէջ 36. Բոմբայի մէջ 12. Չիկրայի մէջ 2։ Մի քանի քաղաքներում բոլորովին սպառուել են, որպէս Սաթայի մէջ մնում է միայն Հայոց նոյակապ եկեղեցին և գերեզմանատունը։

Յայտնի բան է, այդպիսի քահանայները, որպէս ժամանակաւոր վարձկաններ, մոռանում են աւելի իւրեանց նիւթականի մասին...

Մեսրոպ Թաղիադեանցի ժամանակ ծաղկած տպարանի և լրագրութեան հետքն անդամ չէ մնացել։ Առհասարակ այստեղի հայերի մէջ տիրում է անգլիականութիւնը և մի սառն անտարբերութիւն դէպի այն ամենը, ինչ որ ազգային է, ինչ որ հայկական է։ Իսկ դորա վախճանը ես այսօրից կարող եմ մարգարէանալ, որ մի ժամանակ ճանապարհորդը կըտեսնէ Գանգէսի ափերի վերայ լայնատարած գերեզմանատներ, դատարկուած եկեղեցիներ, ահագին պալատների փլատակներ և նրան կասեն՝ այստեղ Հայեր էին բնակվում, իսկ այժմ չկան...

—Վերոյիշեալ լրագրոյն մէջ կընթեռնում՝ նաև զհետևեալ յօդուածն.

«Բագուէն գրում են թէ՝ հաստատ աղբիւրից իմացանք որ՝ մի քանի անձինք հրաւիրել են «Հայկական աշխարհի՝՝ խմբագիր Հ. Խորէն Մոսվանէին Բագու։ Արժա. հոյրիկը համաձայնվել է։ Միայն մի քանի պայմաններ է առաջարկել, որոնք հրաւիրողները յօժարութեամբ ընդունել են։ Այս լուրը մեծ ուրախութիւն է պատճառել առաւելապէս Հայ ուսանողներին՝՝։

Սիրելի է մեզ յուսալ թէ արժա. Խորէն վարդապետ Մոսվանէին 'ի Բագու երթալն՝ արդիւնաւոր պիտի լինի ոչ միայն 'ի մասին գրագիտական յառաջադիմութեան, այլև քրիստոնէավայել եղբայրսիրութեան զարգացման նկատմամբ։ Քանզի Երևանի և Շուշիի մէջ՝ լսածնուս նայելով, յիշեալ ուսումնական խմբագիր վարդապետին ներկայութիւնն, դժբաղդաբար, ազգային ցաւալի երկպառակութեանց առիթ եղած է. մինչդեռ հեզ և խոնարհ Յիսուսին աշակերտի մը գլխաւոր պարտքն է Աւետարանական սէրը քարոզել ուր որ երթայ. վասնզի առանց սիրոյ չէ՛ք ազգային յառաջադիմութիւն, ոչ ուսումնասիրական և ոչ բարոյական։

ՅԱստրախանէ (Ռուսաստան) վերանձնական ներողամտութեամբ գրեն մեզ 'ի մասին Աշալ—ոյ Աբրահամ զհետևեալ տողն. զոր՝ իբրև քաջալերութիւն տակաւ վաստակոց մերոց, շնորհակալու մտօք ընդունիմք։

«Ուրախութեամբ սրտի և գոհունակութեամբ հաղորդ գտանիմք վաստակոց ձերոց՝ յոյժ ախորժանօք ընթեռնլով զլրագիրն՝ ձեօք աշխատասիրեալ և տպագրեալ. զի նորին միջոցաւ հոգեզուարճ բերկրանօք յիշեալ ընդ ոլորտս տիեզերաց, հմտանամք և զբօսնումք վայելչանալով՝ պէսպէս հանգամանաց ծանօթութեամբք հեռաւոր վայրաց՝ արքունեաց, քաղաքական վարչութեանց և այլոց և այլոց, այնպէս թէ՝ մեք ինքնին անձամբ անձին շրջագայեմք 'ի պատուական քաղաքս Եւրոպիոյ, Ասիոյ և այլ հեռաւոր տեղեաց։ Ուստի 'ի բոլոր սրտէ գովելով զբազմամեայ զանխոնջ աշխատութիւն ձեր, զանկեղծ շնորհակալիս մեր մատուցանեմք ձեզ՝՝։

Կ. Պոլսոյ ազգային լրագիրներէն կիմանամք թէ Մեծին Բրիտանիոյ դեսպան սըր Հէնրի Էլիսթ՝ ընկերութեամբ իւր առաջին թարգմանին, ամսոյս 3ին բարեհաճեր է այցելութեան երթալ մեր ամենա. Ս. Պատրիարք Հօր. որոյ հետ մի ժամու չափ տեսակցութիւն ըրեր է։

—Յունաց Կ. Պոլսոյ ամենա. տէր Յովակիմ Ս. Պատրիարքն՝ ընկերութեամբ քանի մը եպիսկոպոսաց և վարդապետաց, ամսոյս 4ին կիրակի օրն այցելութեան գնացեր է մեր Ս. Պատրիարք Հօր. յորմէ արժանաւոր յարգանօք ընդունուեր է։ Յիշեալ Իբրամէնիքոս Պատրիարքն՝ մեկնելու ժամանակն 'ի մայր եկեղեցին մտնելով, առաջի սուրբ սեղանոյն երկրպագութիւն ընելէ ետև, 'ի ներկայութեան բազմաթիւ Հայ և Յոյն ժողովրդոց յունարէն լեզուաւ ճառ մի կարդացեր և յետ այնորիկ մեկներ է։

Այս ճառին հայերէն թարգմանութիւնն՝ (որ քրիստոնէավայել եղբայրսիրութիւն ուՀայ և Յոյն եկեղեցեաց միութեան խնդրոյն կըվերաբերի), մեր յաջորդ թուով պիտի հրատարակեմք 'ի տեղեկութիւն մեր հեռաւոր ընթերցողաց։

—Քաղաքիս մէջ հասատեալ Վահանեան բարեպաշտ ընկերութիւնն, որոյ նպատակն է Զմիւռնոյ եկեղեցեաց ձայնաւոր դպիրներ պատրաստել և զանոնք կրթել 'ի կանոնաւոր և 'ի քաղցր ժամերգութիւն, Վահանեան ընկերութիւնն, կըսեմք, իւր տարեկան եղևմուտը հրատարակեց· որ կըսկսի 1874 Ապրիլի 1էն մինչև ցվերջ Մարտի ներկայ տարւոյս։

Ցիշեալ ընկերութեան մուտքը՝ օսմանեան լիրան 100 ղուրուշ հաշուելով, 13,475ի հասեր է· իսկ ելքը՝ 17,927ի· ըսել է որ 4452 ղուրուշ բաց մի կըմնայ։ Բայց որովհետև Վահանեան ընկերութիւնն ժողովրդեան վստահութիւնն լիովին կըվայելէ, քաջայոյս եմք թէ դալ տարւոյն շրջանին մէջ, բաժանորդաց թիւն պիտի աւելնայ, և ընկերութեան բարեպաշտական ջանքն ևս առաւել արդիւնաւոր պիտի լինին։

—Զմիւռնոյ Անձնուէր ընկերութիւնն ևս իւր երկամեայ եղևմտից հաշուեցուցակն հրատարակեց· յորմէ կըտեսնուի թէ երկուց ամաց մէջ, (սկսեալ 'ի Մայիսէ 1873 մինչև ցվերջ Ապրիլի 1875) յիշեալ ընկերութեան եկամուտն 6544 ղուրուշ եղեր է և ծախքն 4740· ուստի 1804 ղուրուշ աւելորդ գումար մի կըմնայ։

Ցայտնի է թէ Անձնուէր ընկերութեան նպատակն՝ աղքատ տղայոց և չափահաս կարօտ անձանց հայերէն և ուրիշ պիտանի ուսմունք սովրեցնել է ձրիաբար։ Ուստի այսպիսի ազգասիրական ջանից՝ ըստ կարեաց, նպաստամատոյց լինել, նուիրական պարտք մի լինելով իւրաքանչիւր Հայու համար, կըյուսամք որ ամենքն ալ այս պարտքը կատարելու չեն դանդաղիր։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 17 Մայիս։

Նախորդ Մեծ—Եպարդոս և Նահանդիս այժմեան բարեխնամ կուսակալ բարձրա· Հիւսէին Աֆնի փաշան քանի մը օրէ հետէ 'ի Պուճա դիւղն Սբարդալբեան վսեմաշուք Յակոբ էֆէնտիին գեղեցիկ ու ընդարձակ ամարանոցը կըդտնուի· ուր 2—3 շաբաթ պիտի մնայ, կըսեն, նորա հայկական վեհանձն հիւրասիրութիւնն պատուելու և իւր անձնական տկարութիւնն կատարելապէս դարմանելու համար։

—Քաղաքիս Անգղիոյ հիւպատոսարանն երկուշաբթի օրն սովորական հանդիսիւ կատարեց զտարեդարձն ծննդեան Վիքթորիա թագուհւոյն։ Այս բարեպատեհ առթիւ, Անգղիոյ հիւպատոս մեծաշուք միստր Բէմպէրպէյ ընկալաւ դյարգական խնդակցութիւնս ազգայնոց իւրոց, որպէս և տեղական կառավարութեան շնորհաւորութիւնքն, զորս մեծա· Տիրան էֆէնտին մատոյց նմա 'ի կողմանէ բարձրա· կուսակալին։

—Արտաքին գործոց պաշտօնատան արձանագրութեանց դիւանին տեսուչ (խարիճիէ էվրաք միւտիրի) մեծաշուք Զայեան էլիաս էֆէնտին և իւր տիկինն, երկու շաբաթ աստ 'ի ծոց ընտանեաց իւրոց մնալէ ետև՝ այսօր աւստրիական շոգենաւով կըվերադառնան 'ի Կ· Պոլիս։

—Մեր հայրենակից ուսումնական ազգայիններէն մեծարգոյ Գ· Ց· Բաբազեան, որ Զիւրիխի մէջ վաճառականութեամբ կըզբաղի, հինգշաբթի առաւօտուն Դանուբի և Կ· Պոլսոյ ճանապարհաւ հասաւ 'ի քաղաքս· ուր քիչ մը ժամանակ մնալոյ ետև, պիտի վերադառնայ յԵւրոպա։

—Տեղական դրեթէ բոլոր լրագիրք հրատարակեցին յանցելումն, թէ յոյն չափահաս աղջիկ մի վաճառեցաւ Պարսիկ վաճառականի մը։ Այս եղելութիւնն բոլորովին սխալ է, ինչպէս յիշեալ լրագիրք ևս փութացան ծանուցանելու· այլ՝ փոխանակ վաճառման ամուսնութիւն մի տեղի ունեցած է 'ի մէջ յոյն աղջկան մը և Պարսիկ հարուստ վաճառականի մը՝ ազատ հաճութեամբ օրիորդին և ծնողաց իւրոց, որք այժմ իրենց փեսային հետ միատեղ կըբնակին և սիրով ու հանդստութեամբ կապրին։

—Աւստրո—Հունգարիոյ նոր հիւպատոս մեծաշուք Հերցֆէլտ ասպետն յանցելումն շաբաթու հասաւ 'ի քաղաքս և յայսորդեց մեծա· տը Շերցէր աղեստին, որ՝ ինչպէս յայտնի է, Լոնտոնի Աւստրո—Հունգարիոյ հիւպատոսարանին առաջնորդական տեսուչ կարդեալ է։

—Երկուշաբթի առաւօտուն Բունթայի թաղը Մալթայի մը սպանեալ դտնուեցաւ, որոյ մարմնոյն վերայ դանակի 13 հարուածք կային։

—Ամենամ տէր Ներսէս Ս· Պատրիարք Հայրն ամսոյս 13ին փոխադարձ այցելութեան գնացեր է հռոմէական Հայոց դերա· Պատրիարքին, յորմէ բազում յարգանօք ընդունուեր է։

Իզմիր, 14—26 Մայիս 1875

Ցարդոյ խմբագիր Արշալոյսի,

Ամսոյս 3ին տպուած Արշալոյսի մէջ բարութիւն ունեցաք Ն· Բ· Կալլէսի իշխանի՝ Անգղիոյ մեծ ժողովարանի Մեծ Պատկառելի վարպետ կարգուելուն առթիւ, քաղաքիս չորս Անգղիական ժողովարաններուն տօնախմբած անց.ը հրապարակաւ յայտնելու։

Նոյն ստորագրութեան մէջ՝ ըսուած էր որ Ն. Բարձրութեան հեռագրալուր մի քաջուած էր։ Ահա այժմ նոյն հեռագրալրոյն պատասխանը մասնաւոր նամակաւ մի եկած ըլլալով՝ կըներփակեմ թէ առաջնոյն և թէ երկրորդին թարգմանութիւնները, որպէսզի բարեհաճիք սոյներն ալ հրատարակելու, խօսք տալով որ՝ երբ շնորհաւորութեան նամակին՝ որ արդէն խրկուած է, պատասխանը դայ, նոյներուն ալ թարգմանութիւնները խրկեմ ձեզ։ Մնամ ևայլն։ Ա· Կ· Տ·

Ընդօրինակութիւն հեռագրալրոյն։

Ալպերթ Կալլէսի իշխան, Մեծ Պատկառելի Վարպետ Անգղիոյ։ ՅԱլպերթ Հօլ, Լոնտոն։

Ժողովարանք Զմիւռնոյ՝ որք գործեն ընդ իրաւասութեամբ Անգղիոյ, բարեմաղթութեամբ շնորհաւորեն ձեր զետեղումը, 'ի սեղանի ըմպելն ձեր կենդանութեանը։

Ճօրճ· Տ· Բանալէ, երեսփոխան։

Ընդօրինակութիւն պատասխանւոյն։

Մասօնական տաճար, Լոնտոն 8 Մայիս 1875

Առ պատկառելի վարպետ և եղբայր,

Ճօրճ· Տ· Բանալէ, 'ի Զմիւռնիա։

Հրաման ունիմ Ն· Բ· Կալլէսի իշխան Ա· Մեծ Պատկառելի Վարպետէ իմացնելու որ շատ յարգեց այն հեռագրալուրը՝ որով Զմիւռնոյ որմնադիր ժողովարանները իրեն շնորհաւորութիւններ կըմատուցանեն, Անգղիոյ Մեծ Պատկառելի Վարպետ ընտրուելուն համար, և աղաչել զձեզ որ իր անկեղծ շնորհակալութիւնները մատուցանէք իր որմնադիր եղբարց 'ի Զմիւռնիա, որոնք այս առթին մէջ զինք մոքէ հանած չեն։

Մնամ, սիրելի տէր և եղբայր,

անկեղծ և եղբայրական սիրով.

ՃՕՆ ՀԷՐՎԷԼ

Մեծ Քարտուղար։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակը հանդարտ է· մեքենայով մաքրուածը վաճառեցաւ 385—392 ղուրուշի, չըքրքրի՝ 370ի և Ատանայինը՝ 330—330ի։

Աֆիոնը իմնելու հակամէտ է· և վերջին վաճառումն 185 ղուրուշի եղաւ առ չէքին։ Մեր շուկային մէջ այժմ հազիւ թէ 200—250 կողով աֆիոն կըդտնուի։

Բէօքպէյային արժէքն 151—165 ղուրուշ է կենդինարը ըստ տեսակին, և այս գիներով 1000 հակէն աւելի վաճառեցաւ այս շաբթու։

Փալամուտը հանդարտութեան մէջ կդտնուի· նաթիւրէլ ըսուած տեսակէն 3000 կենդինար վաճառեցաւ 189 ղուրուշի և 2000 կենդինար Ուշաքի չրանուած փալամուտ ծախուեցաւ 150ի։

Ճէհրիէն 20 քուրձ դեղեցիկ ապրանք վաճառեցաւ 16 ղուրուշ 30 փարայի օխան։

ՓԱՆՈՒՅՈՒՄ

Տօքթոր Զայեան բժիշկը՝ որ կըբնակի Հելլենական հիւպատոսարանին դիմացը՝ թիւ 65 տունը, իմաց կուտայ յարգոյ հասարակութեան որ՝ թեպետեւ սովորաբար մինչեւ կէսօր Ֆրանկաց թաղը Մանարին դեղարանը կըգտնուի, բայց իւր տանը մէջ ամեն օր ժամը 2ին մինչեւ 4 զկնի կիսաւուր՝ պիտի նայի առ ինքն դիմող հիւանդները, մասնաւորապէս միզագելութեամբ, ամեն տեսակ ափրոտիտեան ախտի, աչքացաւութեամբ վարակեալ անձինքը՝ հանդերձ վիրաբուժական գործողութեամբ (օբերասիօն) եթէ հարկ պահանջէ։

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Աշխատասիրեալ 'ի մեծա· Արմենակ էֆէնտի Կոստանդեան։ Երկրորդ տպագրութիւն· որ մամլոյ ներքև է 'ի Տէտէեան տպարանի Զմիւռնոյ և 'ի մօտ աւուրս կըլմբննայ։

ՀԻԻԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

ԴԵՂԱՀԱՏԱԿ ՀՈԼԼՕՈԷԻ

ԶՂԱՑԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Մարդոյս ջղային դրութեան (նէրվիզ) շատ յոգնած ըլլալն սոսկալի ախտ մըն է և ջիղերուն ամենափոքրիկ շարժումը կամ ոչ գառութիւնը վնասալի է յոյժ· վասն զի մեր գանելու է անոր դեղ։ — Մինակ դեղը այս է· քիչ խմէ գինի, գարեջուր, և սիլեց ըմպելիք· և աւելի աղեկ կըլլայ որ բոլորովին հեռանան նոնցմէ, և ամենևին չխմես· Նմանապէս խահվէ մի խմեր, և ամենեղ թեթև թեյով (չայ) գոհ եղիր։ Կարելի եղածին չափքեր օդ ծծէ ամեն գիշեր իմ դեղահատերս երեք կամ չորս հատ կըլլէ, շատ մի կեր և համեմունքէ (սալչա) հեռի կեցիր։ Եթէ այս օգտակար կանոնները ճշդութեամբ 'ի գործ դնելու ըլլաս միտքդ շատով պիտի հանգստանայ, մարմնդ առողջ պիտի ըլլայ պիտի մոռնաս թէ ջղաց շարժումն ունեցար։

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԵՐԻԿԱՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց կամ թէ կղկղանքը չափին աւելի ջրալից կըլլան կամ բաւական չնչլար, թէ բարը կամ ուռազը երիկամանց կը հանին կամ թունոց մէջտեղեր կը գտնան մէջքին համապատասխանած մասը, Ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլօուէի դեղահատերը ասնուլ տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիովը փել երիկամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը։ Եթէ դարմանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնքիլ բէչ դեղերը ղադր տեղը գործածուած պիտի ըլլան։

ՍՏԱՄՈՔՍԻ ԱՒՐՈՒԻԼԸ

Ո՛ր և է դեղ մի չկրնար ստամոքսի զօրութիւնը նորոգել աղեկցնել զայն շատով՝ ինչպէս այս դեղահատերը· որոնք անբարեխառնութենէ կամ վատթար կերակուրէ պատճառուած բոլոր թերութիւնը կըվանեն և կը հանին 'ի լեարդն (թարա ֆէյեր)։ Բուն գործողութիւնը կը կարգադրեն· ջիղերու սաստիկ ցաւն (նէրվզ) դեղերու մէջ աքանչելի ներգործութիւն մի ունի և լիրու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ։

ԹՈՐԲՈՒՔՈՒՄՆ ԹՈՒՔԱՌԱՋԻՑ (ԳՈՒՆԷԷԹ) ՀԱԱՋ ԵՒ ՀԱՐԲՈՒՂԽ

Շնչաւութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւն ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտանգաւոր է։ Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը լանները կրնան մէջտ կարգադրուիլ Հոլլօուէի հռչակաւոր դեղահատից միջոցաւ։ Ասոնք շատով կը դարմանեն արեան որ և է ժամանակայ անչարժութիւնը, կըթեթևցնեն խցուած շնչերակները, կը բարեխառնեն շնչառութեան սաստիկ արագութիւնը և կը բոլորովին կուտան շնչափողին ու թոքերուն դիւրութեամբ ու կանոնաւորապէս գործելու։ Այս դեղահատերը՝ իրենց մաքրարար զօրութեամբը կը սրբեն արիւնը ամեն աղտեղութիւններեն, և դեղանակաւ կըզօրացնեն զգրութիւնը (ոէՓԷՄ) ընդդէմ ծիրանի ախտի, շնչարգելութեան, և ուրիշ թոքային տկարութեանց։

ՏԿԱՐԱՑԵԱԼ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆՔ

Տկարութեան, թուլութեան և ջղացաւութեան դէպքերու մէջ, որոնք որ և է բնական կամ գերբնական չափազանցութենէ առաջ եկած են, այս դեղահատից պէտքերնիս թիւնը մեծապէս օգտակար է· քանզի մարսողութիւնը կըվերահաստատէ, մարմնոյն ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ, ջղագրութիւնը կըզօրացնէ, հիւանդին միտքը կը յարդարէ և վերջապէս առողջութիւնը ձեռք կը բերէ։

Հոլլօուէի դեղահատերը ամենեն օգտակար դեղերն են տեսեալ հիւանդութեանց համար։

Շնչարգելութիւն,	Ցօդացաւութիւն,	Թոքացաւութիւն,
Մախալային ախտ,	Տեռատեսութիւն,	Ցաւք որովայնի,
Խելթ (սանէլ),	Զրդողութիւն,	Միզարգելութիւն,
Հարբուղխ,	Անմարսողութիւնք,	Բորբոքում,
Ծիւրական ախտ,	Դալուկն,	Ախտք ընդերոց,
Թանչ (էէսանդրէ),	Բաբախիւն սրտի,	Անկանոնութիւնք
Խոյլ պարանոցի,	Քար կամ խիճ միզա-	նանց,
Վերնոսութիւն,	նոցի,	Մորթային հիւանդ-
Լերդի հիւանդութիւնք	Գլխացաւութիւն,	թիւնք,
Փողացաւ,	Ափրոդիտեան ախտք,	Խցողութիւնք,

Գիտելի արժան է որ տպեալ հրահանգներ կան ամենքիրարոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ 'ի տեղեկութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ։

Այս դեղահատերը, որ կըշինուին Հոլլօուէ բժշկին անունական վերատեսչութեամբը, կըվաճառին իւր գործարանը 'ի Լոնտոն, Օքսֆօրտ կոչուած փողոցը թիւ 533, 'ի գին 1 և 1 ուիլչելինի, 2 3/4 և 4 1/2 չելինի տուփը, ըստ մեծութեան տպոց։

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գ—հաս Գ· Պալեաղեան,

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ